ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 36-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 35-ի առաջին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 36-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ և 8-րդ մասերը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 36-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1/ բաժին 01, խումբ 1, դաս 1 ծրագրի 4241 հոդվածի <<350000>> թիվը փոխարինել <<230000>> թվով.
2/ բաժին 01, խումբ 1, դաս 1 ծրագրի 4221 հոդվածի <<130000>> թիվը փոխարինել <<250000>> թվով:

2. Հանձնարարել գլխավոր մասնագետին՝ /Լ.Աղաջանյան/ նախահաշվում և ժամանակացույցում կատարել համապատասխան փոփոխություններ՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի հոկտեմբերի <<01>>
գ.Լուսագյուղ
ժամը՝ 11^{00}

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 22

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 35-ի առաջին մասի 24-րդ կետով, համաձայն տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարության կոմիտեի 2019 թվականի օգոստոսի 2-ի նիստի N ԿԱ/126-2019 արձանագրության 6-րդ կետի՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 14-ի N 70 դրական եզրակացության և համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 9-ի 38-Ա որոշման.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,01 հա /կադաստրային ծածկագիր՝ 0104-0001/ վարելահող փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

2. Կատարել համապատասխան փոփոխություն համայնքի հողային ֆոնդի հաշվառման տվյալներում և հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի հոկտեմբերի <<02>>
գ.Լուսագյուղ
ժամը՝ 11^{00}

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հոկտեմբերի 2019թվականի N 23

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 35-ի առաջին մասի 24 կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> թիվ 2387-Ն, 18.05.2006թ. ՀՀ Կառավարության <<պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքային սեփականության իրավունքի գրանցման կարգը հաստատելու մասին>> N731-Ն որոշումների, ՀՀ կառավարության18.05.2006թ. <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշման 33-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով քաղ. Ալբերտ Խլղաթյանի դիմումը՝ Լուսագյուղ համայնքում ինքնակամ կառուցված 46.10 քմ ներքին մակերեսով շինությունն և 0.01 հա հողամասը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների

օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 0,01 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 46.10 ներքին մակերեսով բնակելի տունը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինության հատակագծերի:
2. Լուսագյուղ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 0.01 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 46.10 քմ ներքին մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:
3. Օրինական ճանաչված բնակելի տանը տրամադրել Լուսագյուղ համայնքի Էջմիածնի խճղ. թիվ 31 հասցեն:
4. Գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ շինությունն իրականացրած անձ.՝ Ալբերտ Արամի Խլղաթյանին /անձ.AR 0247085, տրված 25.03.2017թ. 057-ի կողմից/՝ օրինականացված 46.10 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունն և 0.01 հեկտար հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով գնելու համար:
5. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժնում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
6. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Լուսագյուղ համայնքի ղեկավարի տեղակալ Ա.Սիմոնյանին:
7. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2019 թվականի <<Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը համայնքային սեփականություն համարելու, օրնական ճանաչելու և հասցե տրամադրելու մասին>> N 20 որոշումը:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի հոկտեմբերի <<03>>
գ.Լուսագյուղ
ժամը՝ 11[00]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 24

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՎԱԾ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2019 թվականի գնումների փոփոխված պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի հոկտեմբերի <<29>>
գ.Լուսագյուղ
ժամը՝ 11[00]